



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք

26/07/2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱԿԵՐԹ ՆԻՍԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Հայկ Ավագյանը, Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի ԱՐՏԱԿԵՐԹ ՆԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. Մխիթար Մաթեվոսյան/*

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Վայք համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 18 -ի թիվ 40 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

3. Վայք համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու և Վայք համայնքի ավագանու 09.03.2022 թվականի թիվ 25 -Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

4.Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրում գտնվող թիվ 10-022-0225 -0035 , թիվ 10-022-0226-0019 և թիվ 10-022-0226-0016 կադաստրանի ծածկագրերով հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

5. Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրում գտնվող թիվ 10-022-0225-0035, թիվ 10-022-0026-0019 և թիվ 10-022-0226-0016 կադաստրային ծածկագրերով հողամասերը առանց մրցույթի «Վարդանի Ջարդոնք» ՍՊԸ-ին վարձակալության հանձնելու մասին:

6.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին:

7.Վայք համայնքի Ջեղեա բնակավայրում գտնվող 5.67143 հա արոտավայրը աճուրդային եղանակով օտարելու, վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ 40-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով

1.Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու հինգ անդամներ՝ անհատական հետևյալ կազմով.

ա/Անուշ Արամյան.

բ/Հրաչիկ Մանուչարյան,

գ/Վարդան Կոստանյան,

դ/Շուշանիկ Ասլանյան,

ե/Սուսաննա Կոստանյան:

2.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 18-ի <<Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին>> թիվ 40-Ա որոշումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.03.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 25-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով ՀՀ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի ՀՀ «խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»>> թիվ 164-Ն որոշմամբ,

1. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 09.03.2022թ. թիվ 25-Ա որոշումը:
2. Համայնքապետարանին կից ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:
3. Հաստատել համայնքի ղեկավարի առաջարկած խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը.
  - 3.1. Մխիթար Մաթևոսյան-համայնքի ղեկավար -հանձնաժողովի նախագահ,
  - 3.2. Անուշ Ղազարյան-/աշխատակամի քարտուղար/-հանձնաժողովի քարտուղար,
  - 3.3. Շուշանիկ Ասլանյան-/իրավաբան/-հանձնաժողովի անդամ,
  - 3.4. Սուսաննա Կոստանյան -/մանկավարժ-հոգեբան/ -հանձնաժողովի անդամ,
  - 3.5. Լուսինե Կարապետյան -<<Սըլուշն ՀԱԲ>>համայնքային զարգացման ՀԿ-հանձնաժողովի անդամ,
  - 3.6. Խաչիկ Մկրտչյան -սոցիալական ապահովության Վայքի տարածքային կենտրոն -հանձնաժողովի անդամ,
  - 3.7. Նորայր Հովակիմյան -զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին-հանձնաժողովի անդամ,
  - 3.8. Հրաչիկ Մանուչարյան-Վայք համայնքի ավագանու անդամ /բժիշկ/-հանձնաժողովի անդամ,
  - 3.9. Հովսեփ Զաքարյան- Առաջատար մասնագետ/իրավաբան/-հանձնաժողովի անդամ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Չեղարկված-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿՎԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 10-022-0225 -0035 , ԹԻՎ 10-022-0226-0019 ԵՎ ԹԻՎ 10-022-0226-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՍԱՍՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին», օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ և 15-րդ կետերով և ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920 որոշումը՝

Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող 11.4032 հա մակերեսով /ծածկագիր՝ 10-022-0225 -0035/ ,2.8014 հա մակերեսով /ծածկագիր՝ 10-022-0226-0019/ և 30.3837 հա մակերեսով / ծածկագիր՝ 10-022-0226-0016/ հողամասերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նշանակությունից փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, քանի որ տվյալ հողատարածքները հանդիսանում են հաստատված հանքավայրի տարածքներ մասնավորապես ՀՀ Վայոց ձորի մարզի Սոֆի-Բինայի ոսկի - բազմամետաղային հանքավայրի: Առկա է տվյալ հանքավայրի շահագործման իրավունքի ընդերքօգտագործման պայմանագիր թիվ ՇԱԹՎ-29/239 օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն և թիվ ԼՎ-239 լեռնահատկացման ակտ: Տվյալ փաստաթղթերով տրված իրավունքի կրողը հանդիսանում է «Վարդանի Զարթոնքը» ՍՊ ընկերությունը:

2.ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ս/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԹԻՎ 10-022-0225 - 0035 , ԹԻՎ 10-022-0226-0019 ԵՎ ԹԻՎ 10-022-0226-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՍԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ &#171;ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔ&#187; ՍՊԸ- ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ՍԱՄՎԵԼ ԻՍՏԻԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին»N 1477-Ն որոշման համաձայն և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 44-րդ կետի ը/ ենթակետը՝

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության /ներկայիս՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության/ կողմից 27.09.2012թ. «Վարդանի Զարթոնքը» ՍՊ ընկերությանը է թիվ ՇԱԹՎ-29/239 օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ, թիվ ԼՎ- 239 լեռնահատկացման ակտ և վերջինիս հետ կնքվել է ընդերքօգտագործման պայմանագիր, ինչը նշանակում է, որ «Վարդանի

Ջարդոնքը» ՍՊ ընկերությունը ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք, 11.4032 հա մակերեսով /ծածկագիրը՝ 10-022-0225-0035/, 2.8014 հա մակերեսով/ ծածկագիրը՝ 10-022-0226-0019 /և 30.3837 հա մակերեսով /ծածկագիրը՝ 10-022-0226-0016/ հողամասերը առանց մրցույթի վարձակալության տրամադրել «Վարդանի Ջարդոնք» ՍՊ ընկերությանը՝ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետին համապատասխան:

2. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60\_Մ/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻՍՏԻԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով ՀՀ կառավարությանն 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թ. հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» թիվ 186-Ն հրամանով հաստատված հավելվածի 2-րդ գլխի 9-րդ կետի 5-րդ ենթակետով՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող Ջերմուկի խճուղի 45/1 և Ազատության փողոց 1/5 հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն և կադաստրային քարտեզում կատարել ուղղում:
2. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Մ/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՂԵԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 5.67143 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻՍՏԻԱՐՅԱՆ/*

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ կետին, Հայաստանի Հանրապետության հողային

օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան.

1.Տալ ամաձայնություն Վայք համայնքի սեփականություն համարվող, Ջեդես բնակավայրում գտնվող 10-023-0304-0021 ծածկագրով 5.67143 հա տարածքով արոտավայրը աճուրդով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ մեկնարկային գինը սահմանելով կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

2.ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:


Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ 

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ 

ՄԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ 

ԱՐՏԱՎԱՋԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ 

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ 

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ 

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ 

ՀՐԱԶԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ 

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԶԱՆՈՅԱՆ 

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ 



Նիստին արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը 